

Աշխատանքի առողջություն և անվտազնություն: Ֆիզիկական հեռավորություն

Մերտ շփման մեջ աշխատելը մեծացնում է COVID-19-ին ենթարկվելու վտանգը:

Ներկա առողջապահական խորհուրդն է՝ [health advice](#), որ բոլորը, ներառյալ աշխատավայրի մարդիկ, պետք է կիրառեն ֆիզիկական հեռավորության միջոցառումներ, երբ հնարավոր է:

Դուք պետք է խորհրդակցեք աշխատողների և առողջապահության և անվտանգության ներկայացուցիչների հետ COVID-19-ի հետ կապված հարցերի շուրջ:

Ի՞նչ է ֆիզիկական հեռավորությունը

Հնարավորության դեպքում բոլորը պետք է պահպանեն 1.5 մետր հեռավորություն մյուսներից (իրենց ընտանեկան շրջանակից դուրս):

Որոշ նահանգներ և տարածքներ՝ [states and territories](#) հնարավոր է նաև ունենան սահմանափակումներ մարդկանց ընդհանուր թվի վրա, ովքեր կարող են միևնույն ժամանակ լինել աշխատավայրում:

Ի՞նչ ֆիզիկական հեռավորության միջոցներ կարող են իրականացնել գործատուները աշխատավայրում

Դասավորություն

Հնարավոր է, որ ձեզ անհրաժեշտ լինի վերափոխել ձեր աշխատավայրի դասավորությունը և ձեր աշխատանքային հոսքերը՝ ապահովելու համար ֆիզիկական հեռավորություն: Հաշվի առեք հատակի կամ պատերի գծանշանները հեռավորության պահանջները սահմանելու համար:

Աշխատավայրի ֆիզիկական դասավորությունը փոխելու դեպքում՝ ձեր դասավորությունը պետք է թույլ տա, որ աշխատողները ապահով կերպով մուտք գործեն, դուրս գան և տեղաշարժվեն աշխատավայրում՝ ինչպես սովորական աշխատանքային պայմանների, այնպես էլ արտակարգ իրավիճակների դեպքում:

Հանդիպումներ և ուսուցում

Այն դեպքում, երբ աշխատակազմի հանդիպումները անհրաժեշտ են, օգտագործեք ոչ դեմ առ դեմ տարբերակներ, օրինակ՝ հեռախոսի դաժողովներ կամ տեսախոսի դաժողովներ:

Եթե ոչ դեմ առ դեմ տարբերակը հնարավոր չէ, սահմանափակեք հանդիպման ժամանակը և մարդկանց թիվը:

Ապահովեք, որ մարդիկ լինեն առնվազն 1.5 մետր միմյանցից հեռու: Եթե փակ տարածքում է, ապա ապահովեք բավարար օդափոխություն:

Աշխատավայրի հարմարություններ

Տարածեք կահույքը և կրճատեք ընդհանուր տարածքներ օգտագործող աշխատողների թիվը տվյալ ժամանակահատվածում, ինչպես օրինակ՝ ճաշի ընդմիջումների հատկացում տարբեր ժամերի:

Վերելակներում ապահովեք, որ հնարավորության դեպքում աշխատողները լինեն միմյանցից 1.5 մետր հեռու:

Փակցրեք ցուցանակ ֆիզիկական հեռավորության վերաբերյալ: Անվտանգ աշխատանք Ավստրալիայի (Safe Work Australia) կայքը ունի հղումներ մի շարք պաստառների և տեղեկատու նյութերի համար՝ [of posters and resources](#).

Հաշվի առեք տրամադրել առանձին հարմարություններ, օրինակ՝ առանձին լոգարաններ աշխատողների և այցելուների համար:

Առաքումներ, կապալառուներ և այցելուներ

Յուրաքանչյուրին, ովքեր այցելում են աշխատավայր, տվեք հստակ հրահանգներ ձեր պահանջների մասին, քանի դեռ նրանք աշխատավայրի տարածքում են: Օրինակ՝ մնալ մեքենաների մեջ, օգտագործել շարժական հեռախոսներ կապվելու համար և օգտագործել էլեկտրոնային փաստաթղթեր:

Նվազեցրեք աշխատողների թիվը, ովքեր զբաղվում են առաքումներով և կապալառուներով: Ապահովեք, որ ձեռքեր լվանալու միջոցները կամ, եթե հնարավոր չէ, ապա ակոնոլային հիմքով ձեռքի ախտահանիչները մատչելի լինեն առաքումները կատարելուց հետո:

Իմ աշխատողները չեն կարող պահպանել ֆիզիկական հեռավորություն աշխատելիս, արդյո՞ք սա նշանակում է, որ իրենք չեն կարող աշխատել

Միշտ հնարավոր չի լինի աշխատողներին և մյուսներին պահպանել միմյանցից 1.5 մետր հեռավորություն աշխատավայրում ամբողջ ժամանակ:

Եթե այդպես է, ապա հաշվի առեք, արդյո՞ք առաջադրանքը պետք է ավարտել կամ կարելի է հետաձգել:

Եթե առաջադրանքը պետք է ավարտել և աշխատողները պետք է սերտ շփման մեջ լինեն, գործատուները պետք է իրականացնեն ռիսկի գնահատում՝ որոշելու համար, թե ինչ կարող են անել վերացնելու կամ նվազեցնելու առողջության և անվտանգության ռիսկերը:

Երբ գործնականում հնարավոր է և ապահով է դա անել, վերանայեք առաջադրանքները և գործընթացները, որոնք ներառում են սերտ փոխգործակցություն: Սահմանեք դրանք փոխելու եղանակներ՝ մեծացնելու հեռավորությունը:

Եթե դա հնարավոր չէ, նվազեցրեք այն ժամանակը, որը աշխատողները անցկացնում են սերտ շփման մեջ, և իրականացրեք այլ հսկողության միջոցառումներ:

Օրինակ՝

- նվազեցրեք մարդկանց թիվը տարածքում ցանկացած ժամանակ
- փոփոխեք սկսելու, ավարտելու և ընդմիջումների ժամերը
- տեղափոխեք աշխատանքի առաջադրանքները աշխատավայրի տարբեր տարածքներ, կամ աշխատավայրից դուրս
- բաժանեք աշխատողներին թիմերի, ովքեր աշխատում են նույն հերթափոխով կամ որոշակի տարածքում: Հաշվի առեք, արդյո՞ք թիմերը կարող են ունենալ իրենց ճաշի տարածքները կամ ընդմիջման հարմարությունները, և
- ապահովեք, որ յուրաքանչյուր աշխատող ունենա իր սարքավորումները կամ գործիքները:



Ընթացիկ վերանայում և վերահսկում

Վերահսկեք և վերանայեք ֆիզիկական հեռավորությունը՝ միջոցառումներին հետևելու և արդյունավետ մնալու համար:

Եթե ֆիզիկական հեռավորության միջոցառումները առաջացնում են առողջության և անվտանգության նոր ռիսկեր, ինչպես օրինակ՝ եթե դրանք ազդում են հաղորդակցության վրա կամ դրա հետևանքով ավելի քիչ մարդիկ են աշխատում առաջադրանքի վրա, դուք պետք է կառավարեք այդ ռիսկերը նույնպես:

Լրացուցիչ տեղեկություններ

COVID-19-ի և աշխատանքի առողջության և անվտանգության վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար, այցելեք Անվտանգ աշխատանք Ավստրալիա կայքը՝ [Safe Work Australia website](https://www.swa.gov.au/coronavirus).